Գործ թիվ ԵԴ/9818/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, գործը դատական նիստում քննելու մասին միջնորդությունը մերժելու, եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

<<24>> մարտի 2023թ. **ք.Երևան**

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **դատավոր Հ. Շահնազարյանս**, ծանոթանալով <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատասխանող) <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի 27.02.2023 թվականի թիվ 9/1-Գ որոշումն անվավեր ճանաչելու մասին հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

I. Հայցվորի կողմից հայցադիմում է ներկայացվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ նաև՝ Դատարան) ընդդեմ Պատասխանողի՝ <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի 27.02.2023 թվականի թիվ 9/1-Գ որոշումն անվավեր ճանաչելու մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը Դատարանում մուտքագրվել են 15.03.2023թ թվականին, իսկ աշխատակազմին է հանձնվել 21.03.2023 թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն անհապաղ ուղարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված լիազորված մարմնի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին: Լիազորված մարմինը սույն մասով նախատեսված որոշումն անհապաղ հրապարակում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով նախատեսված տեղեկագրում՝ նշելով կասեցման օրը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

II. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-122-րդ հոդվածներով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր, հետևաբար այն պետք է ընդունել վարույթ՝ որոշումն անհապաղ ուղարկելով ՀՀ ֆինանսների նախարարությանը:

III. Միաժամանակ, հայցադիմումը բովանդակում է նաև միջնորդություն՝ գործը դատական նիստում քննելու մասին, որտեղ վկայակոչվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածը՝ նշվել է, որ <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերությունն իր խախտված իրավունքները գործի շրջանակներում ավելի արդյունավետ կիրականացնի դատական նիստերի միջոցով:

Նշվածի կապակցությամբ Դատարանն արձանագրում է, որ միջնորդությունը չի պարունակում պատճառաբանված հիմնավորում՝ գործը դատական նիստում քննելու անհրաժեշտության վերաբերյալ, և պարզ չէ, թե գրավոր ընթացակարգով՝ առանց դատական նիստ հրավիրելու հայցի քննությունը ինչպես կարող է չապահովել Հայցվորի ակնկալած արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Նման պայմաններում Դատարանը չի կարող գալ եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում, ուստի միջնորդությունն ենթակա է մերժման:

IV. Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ <<Արխիտեկտ Հոմ>> ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի 27.02.2023 թվականի թիվ 9/1-Գ որոշումն անվավեր ճանաչելու մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակել **08.05.2023 թվականին:**

3. Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ գործը դատական նիստում քննելու մասին, մերժել:

4. Որոշումն անհապաղ ուղարկել ՀՀ ֆինանսների նախարարությանը:

5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Հ. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ**